Յուրի ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

1976 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը՝ «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ: 1987 թ. ստացել է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճան, 1990 թ.՝ դոցենտի կոչում: 2019 թ. օգոստոսին նշանակվել է «Փիլիսոփայության և հայոց պատմության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար: Հեղինակ է 6 մենագրության և ավելի քան 30 գիտական հոդվածների:

ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՍԵՐՈՒՆԴԸ

(ժամանակակից ուսանողի սոցիոլոգիական դիմանկարի փորձ)

Հիմնաբառեր. *սերունդների հիմնախնդիր, նախատիպ, հեգեմոնիզմի սերունդ, Միլենիալներ, սպառողական հասարակություն, վիրտուալ իրականություն*

Սերունդների հիմնախնդիրը կարևորվել է բոլոր ժամանակներում՝ դառնալով քննարկման հիմնական, առանցքային հարցերից մեկը, սակայն, սոցիոլոգիական տեսանկյունից, խնդիրը վերլուծության է ենթարկվել միայն Կ. Մանհեյմի «Սերունդների հիմնախնդիրը»[1] աշխատության հրատարակումից հետո, որն էլ, իր հերթին, բազմակողմանիորեն քննարկվել է XX դարի 80–90-ական թվականներին՝ շնորհիվ Վիլյամ Շտրաուսի (William Strauss) և Նիլ Հոուվի (Neil Howe) աշխատությունների: Նրանք առանձնացնում են սերունդների չորս նախատիպ (արքետիպ), որ հաջորդաբար կրկնվում է կերպարանափոխության՝ Վերելքի, Զարթոնքի, Անկումի և Ճգնաժամի փուլերին համընթաց: 1991 թ. հրատարակած իրենց առաջին գրքում Վ. Շտրաուսն ու Ն. Հոուվն առանձնացնում էին Իդեալիստների (Idealist), Արձագանքողների (Reactive), Քաղաքացիների (Civic) և Հարմարվողների (Adaptive) արքետիպերը[2], իսկ «Չորրորդ կերպարանափոխություն» գրքում (1997 թ.)՝ փոխում եզրաբանությունը՝ այն դարձնելով ավելի գեղահունչ. Իդեալիստների փոխարեն նրանք օգտագործում են Մարգարեներ (Prophet), Արձագանքողների փոխարեն՝ Թափառականներ կամ Քոչվորներ (Nomad), Քաղաքացիների փոխարեն՝ Հերոսներ (Hero) և Հարմարվողների փոխարեն՝ Արվեստագետներ (Artist) հասկացությունները[3]:

[1] Мангейм К., Проблема поколений, Очерки социологии знания: проблема поколений. Состязательность. Экономические амбиции: пер. с англ., М., ИНИОН РАН, 2000.

[2] William Strauss, Neil Howe, Generations: The History of America's Future, 1584 to 2069, pp. 73–74.

[3] William Strauss, Neil Howe. The Fourth Turning: An American Prophecy, Broadway Books, 1997, p. 70.

Սերունդների նման դասակարգման հիմքում գոյություն ունեցող արժեքներն են, որոնք ձևավորում են միջին վիճակագրական քաղաքացուն, որը ծնվել է վերոնշյալ կերպարանափոխությունների որոշակի փուլում և ականատեսն է քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, հասարակական և սոցիալական միևնույն փոփոխությունների: Այսինքն՝ սերունդը, որպես սոցիալական երևույթ, սահմանվում է գոյության տեղի և ժամանակի ընդգրկման «միաժամանակայնությամբ», որը որոշվում է ոչ միայն տարիքային ընդհանրությամբ, այլև նրանով, որ նրանք «ենթարկվում են միանման ազդեցության»[4]: Այդ հանգամանքների բերումով էլ ձևավորվում են մարդու բնավորությունը, իրականության ընկալումը, հոգեբանությունը, իր շուրջը կատարվածի հանդեպ արձագանքը, ինչպես նաև վերաբերմունքը Պետության, Հայրենիքի, Ընտանիքի, Ավանդույթների և Սովորույթների նկատմամբ՝ միաժամանակ որոշելով նաև քաղաքացիական ակտիվությունը: Դրանով է պայմանավորված նաև տարբեր սերունդների փոխհարաբերությունը:

Անգլոամերիկյան պատմության վերլուծության արդյունքում Վ.Շտրաուսն ու Ն.Հոուվն առանձնացնում են 25 սերունդ՝ յուրաքանչյուրին բնորոշելով իր դարաշրջանին հատուկ անվանումով. օրինակ՝ «Մեծ ուժի» փուլի (1865–1944 թթ.) սերունդը ներկայացվում է որպես «Միսիոներների սերունդ» (1865–1884 թթ.), «Կորուսյալ սերունդ» (1885–1904 թթ.), «Մեծագույն սերունդ» (1905–1923 թթ.) և «Լռակյաց սերունդ» (1924–1944 թթ.)՝ պայմանավորված պատմական դարաշրջանի առանձնահատկություններով: Մեզ համար հատկապես հետաքրքրական են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ծնված սերունդները, որոնց հետ կողք կողքի ապրում ենք: Հեղինակները նրանց անվանում են «Միլենիումի (հազարամյակի) սերունդ»: Այս փուլում առաջինը «Բեբի-բումի սերունդն» է (1943/5–1963/4 թթ.), որ ծնվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և իր ուսերին տարել դրա հետևանքների հաղթահարման ամբողջ բեռը: Նա իր անվանումն ստացել է՝ արևմտյան զարգացած երկրներում ծնելիության աճի «բումով» պայմանավորված: Սա Մարգարեների սերունդ է, որը մեծացել է հսկայածավալ կայսրության մեջ, «սառը պատերազմի» և «երկաթե վարագույրի» պայմաններում, կոմունիստական գաղափարախոսության և սոցիալիստական ռեալիզմի մթնոլորտում, դաստիարակվել կոմունիստական բարոյականության ոգով ու, թեև բազում զրկանքներին, անուղղելի լավատես է, աշխատասեր, բարձրագույն արժեքների (Հայրենիք ու Ընտանիք) կրող, ուսումնատենչ ու ընթերցասեր:

Նրան հաջորդում է Թափառականների կամ Քոչվորների սերունդը, որ ծնվել է 1964/5–1983/4 թվականներին և կոչվում է նաև «X» կամ «13-երորդ սերունդ» (ԱՄՆ-ի սերունդների հաշվարկով): Վ.Շտրաուսի ու Ն.Հոուվի բնութագրմամբ՝ սա «Զարթոնքի, գիտակցության հեղափոխության» սերունդն է, որին հատուկ են քաղաքական այլախոհությունը, իշխանություններից չբավարարվածությունը, ղեկավարության հանդեպ վստահության պակասը, ամուսնալուծությունների թվի աճը, ազգաբնակչության թվի կտրուկ անկումը, շրջակա միջավայրի և բնապահպանական հիմնախնդիրների մասին խոր մտահոգությունը, համացանցի ստեղծումը, «սառը պատերազմի» ավարտը և այլն:

Հաջորդիվ «Y» կամ «Միլենիալների սերունդն է» (հաճախ անվանում են նաև «Նեքստ», «Ցանցային» և այլն), որ ծնվել է 1983/7–2003/4 թթ.: Սերունդների բնութագրումը տարբեր երկրներում կարող է լինել տարբեր՝ կապված քաղաքական, տնտեսական, հասարակական և այլ գործոնների, առաքելության և ճակատագրերի հետ: Օրինակ՝ եթե ԱՄՆ-ում «Y» սերնդում ընդգրկվում են նրանք, որ ծնվել են 1981–2003 թթ., ապա Ռուսաստանում՝ գորբաչովյան Վերակառուցման շրջանում և հատկապես՝ ԽՍՀՄ փլուզումից հետո՝ 1987–2004 թթ. ծնվածները: Նրանց արքետիպը Հերոսն է: Նրանք լույս աշխարհ են

[4] Мангейм К., Проблема поколений, с. 15:

եկել նախաճգնաժամային շրջանում, և նրանց պատմական խնդիրն է հերոսանալ, երբ կգա անհրաժեշտ ժամանակը: Նրանց համար գլխավոր, առանցքային արժեքը կյանքի որակի բարելավումն է: Նրանք համոզված են, որ փոփոխությունները անհրաժեշտ են՝ պայքարելով հանուն փոփոխությունների:

Հաջորդը «Z» սերունդն է, որ ծնվել է երրորդ հազարամյակում: Նրա արժեքային համակարգը ձևավորվում է տնտեսական և քաղաքական ճգնաժամային շրջանում: Նրա արքետիպը Արվեստագետն է: Թե ինչպիսին կլինի նա հետագայում, պարզ չէ, քանի որ դեռևս ձևավորման փուլում է, սակայն մի բան արդեն իսկ ակնհայտ է, որ նա միանգամայն առանձնահատուկ է, անսովոր կերպով օժտված, ինքնատիպ փիլիսոփայությամբ և աշխարհայեցողությամբ, ստեղծագործող, որին ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա Միշել Սերն իր փոքրածավալ, սակայն ընդգրկուն՝ «Մատնաչափիկ աղջիկը» փիլիսոփայական էսսեում բնութագրում է որպես «կոճակային», «մուտանտ սերունդ», որպես «հրաշամանուկ՝ առանց բացառության», որ ծնվել է գաջեթը ձեռքին և կարողանում է մեկ ձեռքով էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել, մի քանի ընկերոջ հետ նամակագրություն իրականացնել և, միաժամանակ, երաժշտություն լսել կամ ֆիլմ դիտել: Նրա ուղեղն ի վիճակի է ոչ միայն ընդունելու հսկայական քանակությամբ տեղեկություններ, այլև մշակելու և յուրացնելու դրանք:

Նա գրքեր չի կարդում, փողոցում քիչ է զբոսնում, ավելի շատ սիրում է խաղալ համակարգչային խաղեր, ինչն անհանգստացնում է ոչ միայն տատիկ – պապիկների (Բեբի-բումի), այլև ծնողների՝ «X» և «Y» սերնդի ներկայացուցիչներին, որոնց մանկությունն անցել է փողոցում: Նրանք մշտական հակամարտության մեջ են զավակների հետ և, հաճախ, նրանց տնից ուղղակի վռնդում են փողոց՝ սահմանափակելով համակարգչային ժամանակը, ստիպելով գրքեր կարդալ:

Անկասկած, միանգամայն կարևոր է երեխայի առողջության, ֆիզիկական և հոգևոր զարգացման մասին մտահոգվելը, սակայն չպետք է մոռանալ, որ դա է ժամանակակից երեխայի աշխարհը, նրա բնական միջավայրը, և որ այդ պայմաններում է նա պատրաստվում իր «Ժամանակին»: Այն, որ նա գրադարան չի հաճախում, ծավալուն գրքեր չի կարդում, Միշել Սերի կարծիքով, բնական է, թեկուզ և այն իմաստով, որ միայն վերջին հարյուր տարում ֆրանսերենը հարստացել է 30000 բառով, որ լեզուն, որպես մշակութային երևույթ, հետևում է հասարակական փոփոխություններին, և որ այսօրվա ֆրանսերենը գալիք սերունդների համար շուտով կարող է դառնալ այն, ինչ հին ֆրանսերենն այսօրվա ֆրանսիացու համար (աներկբա է, որ նույնը կարելի է ասել նաև հայերենի մասին): Բացի դրանից, այս սերնդի տեղեկության աղբյուրը սմարթֆոնն է, լավագույն խորհրդատուն՝ ամենագետ «Google»-ը:

Փորձենք քննարկել նաև ժամանակակից՝ «Y» սերնդի ուսանողի սոցիոլոգիական կերպարը: Ո՞վ է նա՝ «հետմոդեռնի» դարաշրջանի ուսանողը, որի հետ ապրում ենք «լսարանից դուրս» և աշխատում «լսարանում»: Ինչ խնդիր է դրված նրա առաջ՝ որպես քաղաքացու և որպես ապագա մասնագետի, ո՞րն է նրա նպատակը:

Ժամանակակից ուսանողը՝ 16/18–21/23 տարեկան, բազմակողմանիորեն զարգացած, եռանդուն, համառ, պատվախնդիր, հավակնոտ, արկածների սիրահար երիտասարդ է, որին թվում է՝ «հաղթահարել» է մանկությունը, սակայն, մինչև հասունություն, դեռ երկար ճանապարհ ունի անցնելու, թեև ինքն իրեն համարում է հասուն: Սա նրա համար ոչ միայն ակտիվորեն աշխատելու, այլև նոր գիտելիքներ ձեռք բերելու շրջան է: Այս տարիքում է, որ նա որոնում և փորձում է գտնել իր տեղը հասարակության մեջ և այդ հարցում կարիք ունի ուղղորդող խորհրդատուի, որ շատ անգամ կարող է լինել նրա ուսուցիչը, դասախոսը: Վերջինս ոչ միայն ի վիճակի է բացահայտելու երիտասարդի ներքին հոգևոր-բանական ընդունակությունները, այլև եռանդն ու միտքը շարժելու անհրաժեշտ ուղղությամբ՝ այնպես, ինչպես Արիստոտելն Ալեքսանդր Մակեդոնացու:

Ժամանակակից ուսանողը Հետմոդեռնի

սերունդն է: Նա արագորեն փոփոխվող սոցիալական պայմանների ծնունդ է: Նրա արժեքային համակարգի ձևավորման և ամենօրյա որոշումների կայացման վրա ավելի ուժեղ են ազդում սպառողական վարքագիծն ու հոգեբանությունը, քան ավանդական արժեքները, ինչպիսիք են կրոնը, բարոյականությունը, գիտությունը: Չեխոսլովակիայի նախագահ Վացլավ Հավելը 1992 թ. «New York Times»-ին տված հարցազրույցում ասում էր. «Մենք ապրում ենք հետմոդեռնիստական աշխարհում, որտեղ ամեն ինչ հնարավոր է և գրեթե ոչ մի բանի մեջ չկա որոշակիություն»[5]: Հետմոդեռնն ավելի հակված է դեպի հոռետեսություն՝ հռչակելով, որ յուրաքանչյուրի «ճշմարտությունն» իր ճշմարտությունն է, որ անձնական կարծիքն ավելի կարևոր է ճշմարտությունից, իսկ անձնական փորձը՝ գիտությունից և բանականությունից՝ չընդունելով հեղինակություններ: Փաստորեն, տեղի է ունենում մի տեսակ վերադարձ դեպի սոփեստությունը: Թերևս, դրանով է պայմանավորված, որ որոշ հետազոտողներ ժամանակակից ուսանողին բնութագրելիս առավել բնորոշ են համարում այնպիսի հոգեգծեր, ինչպիսիք են «քաղաքացիական օրինապահության» (լոյալության) բացակայությունը, «բարեկիրթ վարքի» պակասը: Արկանզասի համալսարանի մեթոդական ծառայության տնօրեն Մարկ Թեյլորը, իր հոդվածներից մեկում անդրադառնալով այսօրվա ուսանողին, նկատում է, որ «միանգամայն ցածր է վերջինիս քաղաքացիական գիտակցությունը», որ նա գրեթե անծանոթ է հասարակական վարվելաձևերին և թույլ է կապված ավանդական հասարակական կառուցվածքներին: Նա, միաժամանակ, նշում է, որ այս սերունդը ծայրահեղ անտարբեր է ուսման հանդեպ և որևէ հետաքրքրություն չի ցուցաբերում ո՛չ մաթեմատիկայի, ո՛չ բնագիտության և ո՛չ էլ հումանիտար գիտությունների նկատմամբ[6]:

Ընդհանրացնելով առավել տարածված տեսակետները՝ կարելի է ասել, որ այսօրվա ուսանողին բնորոշ է.

ա) *Սպառողական վերաբերմունք կյանքի նկատմամբ:* Մեծամասնությունը ձգտում է բավարարել իր ցանկությունները, որոնում է ավելի շահավետ գործարք, հակված է առևտրի՝ առևտրային գործարք համարելով նաև ուսումնական գործընթացը: «Սպառումը» ժամանակակից հասարակության բնորոշ գիծն է, «առատության հասարակության» որոշիչ հատկանիշը: Այդպիսի հասարակությունում իրերի օգտագործումը չի ավարտվում դրանց գործնական և նշանագիտական կիրառմամբ, ինչպիսին եղել է միշտ և ամենուր: Սպառողական հասարակության ամենաբնորոշ երևույթներից մեկը գովազդն է, որն ուղղորդում է մեզ: Մենք չենք հավատում նրան և, չհավատալով հանդերձ, հետևում ենք, որովհետև այն մեզ համար թանկ է:

բ) *Կողմնորոշում դեպի զվարճանքը:* Արևմուտքում դեռևս մանուկ հասակից «Next» սերնդին ներշնչում են այն գիտակցությունը, որ հրապուրիչ, թեթև և բավականություն պատճառող պետք է լինի այն ամենը, ինչով զբաղվում է նա, ներառյալ՝ ուսուցումը, որ սպառողական հասարակության մեջ դառնում է վճարովի շուկայական ծառայություն: Դասախոսները հաճախ են բողոքում, որ իրենց ուսանողները ցանկանում են լավ գնահատականներ ստանալ՝ նվազագույն ջանք գործադրելով, որ կրթական չափորոշիչներն անկում են գրանցում, որ գերիշխում է անտարբերությունը և այլն: Իհարկե, պետք է խոստովանել, որ փոխվել է նաև կրթական համակարգը: Եթե նախկինում պրոֆեսորն ուսանողներին տալիս էր 70%-ն այն գիտելիքի, որ կուտակել էր 20-30 տարվա ընթացքում, ապա հետմոդեռնի շրջանում պատկերը միանգամայն այլ է, և պրոֆեսորի ձեռք բերած գիտելիքի գրեթե 80%-ն արդեն հնացած է, իսկ այն, ինչ դեռևս արդիական է համարվում, ուսանողը կարող է ձեռք բերել նույնիսկ տանը՝ համակարգչում նշելով «բանալի» բառեր:

գ) *Սպառողի իր իրավունքի մասին բարձրաձայնումը:* Ինքը վճարել է ուս-

[5] Havel V., The end of the modern era. New York Times, March 1, 4 (1), 1992.
[5] Марк Тейлор, Поколение Next. Студент эпохи постмодерна, http://jarki.ru/wpress/2009/01/26/413/

ման համար, ուրեմն՝ ենթադրվում է, որ իրավունք ունի ստանալու իր ապրանքը, այսինքն՝ ստուգարքներն ու քննությունները, հետագայում՝ նաև դիպլոմը: Իսկ թե ինչպիսին կլինի իր ապագան՝ առանց համապատասխան գիտելիքի, այդ մասին նա չի էլ մտածում, քանի որ համոզված է՝ յուրաքանչյուր հաստատություն պետք է ուրախ լինի, եթե ինքը ցանկանա աշխատել այնտեղ, իսկ մասնագիտացումը կխորացնի ընթացքում: Այս սերունդը քննադատական իդեալիզմի կրողն է. մի կողմից նա իդեալականացնում է իրեն, իսկ մյուս կողմից՝ քննադատում այն ամենը, ինչով շրջապատված է[7]:

դ) *Անվստահություն ավանդական արժեքների և կրթական համակարգի հանդեպ:* Կրոնական, գիտական, բարոյական արժեքների փոխարեն՝ հետևում է զվարճանքի և հեդոնիզմի արժեքներին:

ե) *Ցանկությունների անզսպություն:* Ենթադրում է, որ իր յուրաքանչյուր պահանջմունք պետք է բավարարվի անմիջապես: Ավանդական պատկերացումները զսպվածության, համեստության և այլնի մասին կորցրել են իրենց այժմեականությունը:

Վ.Շտրաուսն ու Ն.Հոուվը 2000 թ. հրատարակած՝ «Միլենիալները գնում են քոլեջ»[8] աշխատության մեջ, ամբողջացնելով ժամանակակից ուսանողի կերպարը, գրում են՝ այսօրվա ուսանողները վստահ են իրենց բացառիկության մեջ, նրանք մարմնավորում են իրենց երկրի և ծնողների հույսերն ու սպասումները, որոնք, եթե անգամ արդարացված են ծնողների առումով, ապա ազգի ու հայրենիքի տեսանկյունից՝ դեռևս ապացուցման կարիք ունեն: Նրանցից շատերը, գուցե, դպրոցական տարիներին հասել են որոշակի հաջողությունների, սակայն հետագայում, բախվելով իրականությանը, նաև բուհական կրթության դժվարություններին, ցնցումներ են ապրել՝ կանգնելով լուրջ խնդիրների առաջ, սակայն, միևնույն է, չեն կորցրել «հրաշամանուկի» իրենց ինքնագնահատականը:

Այս սերնդի բնորոշ հատկանիշներից է նաև սկեպտիցիզմը, հատկապես՝ անվստահությունը պետական հաստատությունների, տեղեկատվական միջոցների, կրոնի, գիտական հեղինակությունների և գիտելիքի ավանդական աղբյուրների, այդ թվում՝ դասախոսի հանդեպ: Իսկ երբ դրան գումարվում է նաև ամբարտավանությունը, ուսանողը պարզապես դառնում է անտանելի...[9]:

Իհարկե, այս բնութագրումներում քիչ չէ նաև առասպելը, որ, ըստ էության, չի համապատասխանում իրականությանը: Օրինակ՝ մենեջմենթի և կորպորատիվ ուսուցման ճանաչված մասնագետներից մեկը՝ Բրյուս Տուլգանը, «առասպել» է համարում այն տեսակետը, որ «Y» սերունդն օրինապահ չէ և չի ցանկանում կատարել իր պարտականությունները: Նա կարծում է, որ այս սերնդի ներկայացուցիչները կարող են լինել միանգամայն օրինապահ, միայն թե նրանց նվիրվածությունը սկզբունքորեն տարբերվում է բարձրագույն իշխանության հանդեպ կույր օրինապահությունից»: Կամ՝ «Նրանք սովորում են միայն հեռավար, համակարգչի միջոցով: Մինչդեռ, իրականում, նրանք հեռավար սովորում են այն, ինչ հնարավոր է հեշտությամբ յուրացնել: Այնինչ, որպեսզի ուսուցումը լինի հաջողակ, նրանց անհրաժեշտ է ուսուցչի մասնակցություն: Նրանք լավ արդյունքի են հասնում միայն այն ժամանակ, երբ մարդկային գործոնը՝ հրահանգը, խորհրդատվությունը, ղեկավարումը, աջակցությունը, փորձի փոխանակումը, միավորվում է համակարգչային հզորության հետ...»[10]:

Որոշ հետազոտողներ, անդրադառնալով ուսանողների վրա սոցիալական ցանցերի բացասական ազդեցությանը, դա բնութագրում են որպես լուրջ հիվանդություն: Համացանցից կախվածությունը, հիրավի, XXI դարի անբուժելի հիվանդություններից մեկն է: Դեռահասը կարող է

[7] Теория поколений: X, Y, Z - кто они, https://rulesplay.ru/articles/teoriya-pokoleniy-x-y-z-kto-oni/
[8] Howe N. and Strauss W., Millennials go to college. New York: LifeCourse, 2003.
[9] Այս մասին տես Студент XXI века: социальный портрет на фоне общественных трансформаций. Монография под общ. ред. В.И. Астаховой, Харьков, 2010, с. 73–76:
[10] Тулган Б., Не всем достанется приз. Как управлять поколением Y», https://hbr-russia.ru/biznes-i-obshchestvo/fenomeny/p20171

ամբողջ օրը նստել համակարգչի առջև՝ վիրտուալ իրականության մեջ, կտրված իրական կյանքից, զուտ մարդկային հարաբերություններից: Ի՞նչ կարող է տալ մարդուն տեխնոլոգիական այդ թռիչքը: Ըստ հետմոդեռնիզմի՝ մարդը ձեռք է բերում այլակեցության մեջ թափանցելու միջոց, մինչդեռ երևույթը աներկբայորեն հնարավոր չէ գնահատել: Մարդը, որ հսկայական պատմություն է կերտել, աստիճանաբար զրկվում է իր հատկություններից ու որակներից: Արիստոտելը մարդուն բնութագրում է որպես «հասարակական էակ», որ ոչ միայն հասարակության արդյունքն է, այլև չի կարող ապրել առանց հասարակության: Այնինչ, ժամանակակից վիրտուալ իրականությունը, տեխնոլոգիաները ստեղծել են մի իրավիճակ, երբ մարդը կտրվել է մարդուց, չունի հաղորդակցման անհրաժեշտություն, խորասուզվելով իր իսկ ստեղծած անիրական իրականության մեջ՝ բավարարվում է այդ իրականությամբ: Սա յուրատեսակ վերադարձ է դեպի «անապատականություն», դեպի «ճգնակեցություն», միայն այն տարբերությամբ, որ անապատականի և ճգնակյացի աշխարհը հոգիների ամենագերխիտ բնակեցված աշխարհն էր, իսկ ժամանակակից երիտասարդինը՝ «Դիմագրքի» (ֆեյսբուքյան) ընկերների վիրտուալ աշխարհը: «Ընկերներ», որ ամեն օր և ամեն ժամ քեզ հետ են՝ իրենց «հավանումներով», էլ. հաղորդագրություններով, մինչդեռ իրականում չկան… Սա լուրջ սպառնալիք է ժամանակակից սերնդի համար:

Տեղեկատվությունը վերածվել է «ուղեղի սննդի», և տեղեկությունների պակասից ուղեղը սկսում է «սովել» այնպես, ինչպես կարող էր «սովել» ստամոքսը սննդի պակասից: Այստեղից էլ սկսվում է ձանձրույթը, քանի որ տեղեկությունն ուղեղին չի հասնում պահանջված արագությամբ և քանակությամբ: Սա միանգամայն լուրջ հիմնախնդիր է հատկապես կրթական համակարգի համար, քանի որ վերջինս, նույնիսկ չափազանց մեծ ցանկության դեպքում, ի վիճակի չէ ապահովելու նման տեղեկատվություն, թեկուզ և այն պատճառով, որ յուրաքանչյուր գիտելիք կարիք ունի բացատրության և հիմնավորման, ինչպես նաև յուրացման: